ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ-212
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «2» «05» 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Գ. Սաֆարյանի, մի կողմից, և «Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Լուսինե Թորոյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պետական մարմինը հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պետական մարմնի կողմից հատկացված միջոցներն ուղղել «Ինքնության դարբնոց» սոցիալ-մշակութային, կրթական ծրագրի իրականացման ծախսերին՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող ծրագրի (Հավելված N 1) և ծախսերի նախահաշվի (Հավելված N 2):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 *Պետական մարմինը պարտավոր է՝*

2.1.1. Ի կատարումն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի ապրիլի 29-ի N 786-Ա/2 հրամանի՝ հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ֆինանսավորվող մշակութային դրամաշնորհային ծրագրերի «Թանգարանային ծրագրեր և միջոցառումներ» ծրագրի շրջանակներում դրամաշնորհի հատկացման մասնագիտական խմբի 2022 թվականի փետրվարի 25-ի նիստի N 4 արձանագրությունը՝ Կատարողին հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի «1075. Մշակութային ժառանգության ծրագրի» «11004. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» միջոցառման ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված անհատույց դրամաշնորհների հաշվին,

2.1.2. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում ընդունել Կատարողի կողմից Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունները, ընդունելուց հետո ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

2.2. *Պետական մարմինն իրավունք ունի՝*

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինիս գործունեությանը,

2.2.2. Կատարողի կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.2.3. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները,

2.2.4. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կատարողից պահանջել ներկայացնել Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվի, ինչպես նաև Պայմանագրի այլ պարտադիր պահանջները,

2.3.2. Պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին,

2.3.3. Մինչև Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված հաշվետվությունների ներկայացման ժամկետի ավարտը Պետական մարմնին ներկայացնել հաշվետվություն (ֆինանսական և բովանդակային) իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է Պետական մարմնի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կատարողի մոտ, վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար), իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.3.4. Պայմանագրից բխող աշխատանքները չկատարելու դեպքում վերադարձնել Պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5,0 (հինգ) տոկոսի չափով,

2.3.5. Հրապարակել Պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.3.6. Ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները վերացնելու նպատակով,

2.3.7. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել **«Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով**,

2.3.8. Պայմանագրով սահմանված աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը:

2.4*. Կատարողն իրավունք ունի՝*

2.4.1. Պետական մարմնի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.4.2. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պետական մարմինը Կատարողին հատկացնում է 3000,0 հազար (երեք միլիոն) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելվածի N 2-ի,

3.2.Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը Կատարողին հատկացվում է Պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ Կատարողի հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «Հայաստանի Հանրապետոիթյան 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները Կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝օրենքով սահմանված կարգով,

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում,

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կատարողի կողմից այն կատարել շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Պետական մարմինը իրավունք ունի կամ ստանալ Պայմանագրի 3.1-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը,

5.4. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար,

5.5. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում Կատարողը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը մինչև 2022 թվականի նոյեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2022 թվականի դեկտեմբերի 1-ը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8.ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

9.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների ողջ ծավալով կատարման ավարտը:

10. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

10.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ,

10.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից,

10.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կատարողին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ,

10.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր,

10.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կատարողից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

11.1. Պայմանագիրը կազմված է 8 թերթից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ,

11.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

12. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան» ՊՈԱԿ
Երևան, Վ. Սարգսյան 3	Աբովյան 64, ք. Երևան
Կառավարական տուն N 2	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 900018001322, հվհհ 01573636
Հ/Հ 900011032399, հվհհ 02698732	հեռ.՝ 010 56 93 80
Գլխավոր քարտուղար՝ **Գ. Սաֆարյան**	**Տնօրեն՝** **Լ. Թորոյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ. Տ.	Կ. Տ.

Հավելված N 1

2.05 ----- 2022թ.

N 212 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

«Ինքնության դարբնոց» սոցիալ-մշակութային, կրթական ծրագրի

1	Կազմակերպության անվանում	«Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	Աբովյան 64, ք. Երևան
3	Ծրագրի անվանում	«Ինքնության դարբնոց» սոցիալ-մշակութային, կրթական ծրագիր
3.1	Բովանդակություն	2020 թվականին «Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան»-ում մեկնարկեց «Ինքնության դարբնոց» նախագիծը, որը հնարավորություն է ընձեռում Թանգարանն առավել արդյունավետ և համակարգված կերպով վերակազմակերպել որպես սոցիալ-կրթական տարածք՝ ապահովելով մշակութային ժառանգության հետ անհատի հաղորդակցումն ինչպես տեսական, այնպես էլ գործնական գիտելիքների փոխանցման միջոցով: «Ինքնության դարբնոցում» դասավանդվում են գորգագործություն, կարպետագործություն, ասեղնագործություն, ժանեկագործություն, թաղիքագործություն, փայտի գեղարվեստական փորագրություն, խեցեգործություն, ավանդական երգ ու պար. նախատեսվում է կրկին ընդլայնել դասավանդվող ծրագրերի թիվը: Եվ քանի որ հասարակության բոլոր, այդ թվում և խոցելի խմբերն ունեն երկրի մշակութային կյանքին մասնակցելու իրավունք, 2021 թվականին Թանգարանը հանդես եկավ նոր նախաձեռնությամբ՝ իր կրթական գործունեության մեջ առավել ակտիվացնելով սոցիալական բաղադրիչը. ծրագրի շահառուների թվում էին մարտական գործողություններին մասնակցած և վիրավորում ստացած զինծառայողներ, մանկատան և երեխաների սոցիալական աջակցության կենտրոնի սաներ, ծերանոցում խնամք ստացող տարեցներ, որոնք Թանգարանի համակարգմամբ և ոլորտի փորձառու վարպետների օգնությամբ ծանոթացան փայտի

		գեղարվեստական մշակման, կարպետագործության և ասեղնագործության արվեստներին: Կրթական ծրագիրն իրականացվել է Մարի Իզմիրլյանի անվան երեխաների խնամքի հատուկ կարիքով մտավոր և ֆիզիկական խանգարումներ ունեցող 15, «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոնի 15, Գավառի խնամքի կենտրոնի 15, Երևանի թիվ 1 տուն-ինտերնատի 15 շահառուների և արցախյան պատերազմի հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած 10 անձանց համար:
3.2	Նպատակ	Ծրագրի նպատակն է հասարակության խոցելի խմբերի շրջանում մշակութային անվճար շարունակական կրթության ապահովումը Երևանում և մարզերում: Ծրագրի խնդիրներն են՝ • շահառու խմբերի անհատներին փոխանցել ժողովրդական արվեստի 3 ոլորտների՝ փայտի գեղարվեստական մշակման, ասեղնագործության, կարպետագործության վերաբերյալ տեսական գիտելիքներ և կատարման տեխնիկայի գործնական հմտություններ, • ստեղծել հասարակության խոցելի խմբերի համար կյանքի որակի բարելավման պայմաններ, • պահպանել և տարածել հայկական ոչ նյութական մշակութային ժառանգության մաս կազմող ժողովրդական արհեստագործության ոլորտները՝ իրենց գաղափարական հիմքով, • ձևավորել ներառական, ազգային ժառանգությունն արժևորող և համամարդկային բարձր արժեքներ կրող հասարակություն, • ստեղծել հասարակական արդի կյանքում ակտիվություն դրսևորող և լսարանի մասնակցայնությունն ապահովող Թանգարանի արդիական մոդել, • շարունակաբար զարգացնել և ընդլայնել Թանգարանի կրթական գործունեությունը, • որպես ուսուցիչներ ներգրավել նաև մարզաբնակ վարպետներին:
3.3	Անցկացման ժամկետ	01.05.2022 – 31.10.2022
3.4	Անցկացման վայր	Երևան, Վայոց Ձորի, Տավուշի և Գեղարքունիքի մարզեր

3.5	Ակնկալվող արդյունքներ	Ծրագրի ավարտին մասնակիցները կունենան նոր գիտելիքներ և հմտություններ, ծրագրի իրականացման ողջ ընթացքում նրանք կզգան իրենց կարևորությունը հասարակության մեջ, կյանքը բարելավելու հնարավորությունը, արվեստի դրական ազդեցությունն իրենց հոգեկան աշխարհի վրա, ինչպես նաև պետության և մասնավոր սեկտորի համատեղ աջակցությունը, կամրապնդեն ազգային ինքնագիտակցությունը:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Մարտական գործողություններին մասնակցած 20 զինծառայողներ և նրանց ընտանիքների անդամներ, Երևանում և մարզերում գտնվող երեխաների և ծերերի սոցիալական աջակցության կենտրոնների 60 շահառուներ և սոցիալապես անապահով խմբերի անդամներ Թանգարանի դպրոցում ամիսներ շարունակ անվճար կսովորեն փայտի գեղարվեստական մշակում, կարպետագործություն և ասեղնագործություն: Ծրագիրը կլուծի սոցիալական խնդիր՝ միևնույն ժամանակ պահպանելով և տարածելով հայկական ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքները:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032399, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գ. Սաֆարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան» ՊՈԱԿ
Աբովյան 64, ք. Երևան
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001322, հվհհ 01573636
հեռ.՝ 010 56 93 80
Տնօրեն՝ **Լ. Թորոյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«2» «05» 2022 թ.
N --2/2----- պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ինքնության դարբնոց» սոցիալ-մշակութային, կրթական ծրագրի

Հ/Հ	Ծախսատեսակի անվանումը	Չ/Մ	Քանակ	Մեկ միավորի արժեքը (հազար դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Վարձատրության ծախս, ներառյալ հարկերը, այդ թվում՝**				**1,684.0**
	ծրագրի համակարգող	ամիս	2	200.0	400.0
	հաշվապահ-գնումների մասնագետ	ամիս	1	150.0	150.0
	փայտի փորագրության 2 մասնագետ	դասաժամ	72	4.5	324.0
	կարպետագործության և ասեղնագործության 4 մասնագետ	դասաժամ	180	4.5	810.0
2	**Կազմակերպչական ծախսեր, այդ թվում՝**				**816.0**
	շրջանակ (կարպետ գործելու համար)	հատ	50	2.0	100.0
	հենքի թել	կգ	4	7.0	28.0
	միջնաթել	կգ	2	7.0	14.0
	գործելու թել	կգ	22	8.0	176.0
	կարպետի ասեղ	հատ	30	1.0	30.0
	թել (DMC)	հատ	50	0.3	15.0
	ասեղ	տուփ	5	0.3	1.5
	կանվա	մետր	3	6.0	18.0
	թել հրիս	հատ	15	0.8	12.0
	կտոր	մետր	15	2.5	37.5
	պարսպատու և շրջանակ	հատ	27	3.0	81.0
	փայտ	հատ	8	6.0	48.0
	փորագրության գործիք	տուփ	7	12.0	84.0
	խարտոց կիսակլոր	հատ	10	2.0	20.0
	խարտոց կլոր	հատ	10	1.8	18.0

	սեղմիչ	հատ	10	2.5	25.0
	դուր	հատ	10	2.0	20.0
	սղոց փայտի	հատ	10	2.5	25.0
	մամլակ	հատ	7	9.0	63.0
	ԸՆԴԱՄԵՆԸ				**2,500.0**
	ԱԱՀ*				**500.0**
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ				**3,000.0**

* ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կատարողի կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032399, հվհհ
02698732

Գլխավոր քարտուղար՝
Գ. Սաֆարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Հովհաննես Շարամբեյանի անվան
ժողովրդական արվեստների թանգարան»
ՊՈԱԿ
Աբովյան 64, ք. Երևան
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001322, հվհհ 01573636
հեռ.՝ 010 56 93 80

Տնօրեն՝ **Լ. Թորոյան**
(ստորագրություն)
Կ.Տ.